



ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՑՈՒՄ

«ԿԱՌՈՒՅՈՂԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ
ՀԱՆՁՆԱԿՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳԻՐ

Հանրային պաշտպանի ինստիտուտը կարգավորող օրենսդրական դաշտը

ՀՀ Սահմանադրություն

ՀՀ օրենքը Փաստաբանության մասին

ՀՀ կառավարության 2017-2022թթ. Ճրագիր

Նախատեսվում է նաև՝ ՀՀ դատական և իրավական բարեփոխումների
2018-2023 թվականների ռազմավարությունը եվ դրանից բխող
գործողությունների ծրագիրը

Առկա խնդիրները

Հանրային պաշտպանի գրասենյակ (ՀՊԳ)

□ ՀՊԳ-ի ֆինանսավորում

Իրականացվում է *պետական բյուջեի միջոցների հաշվին*: Հաշվի առնելով անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար դիմած քաղաքացիների հայտերի և փաստացի իրավաբանական օգնություն տրամադրելու դեպքերի վիճակագրական տվյալները՝ ՓՊ խորհուրդը հանրային պաշտպանի գրասենյակի ծախսերի նախահաշիվը (բյուջետային հայտը) ներկայացնում է ՀՀ կառավարություն՝ պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար:

Առկա խնդիրները

Հանրային պաշտպանի գրասենյակ (ՀՊԳ)

□ ՀՊԳ-ի ֆինանսավորում

Պետք է նաև նշել, ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ՀՊԳ-ին տրամադրված ֆինանսավորումը, 2012թ. համեմատությամբ, աճել է 152 մլն. ՀՀ դրամից մինչև 260 մլն. ՀՀ դրամ 2013թ., մինչև 275 մլն. ՀՀ դրամ՝ 2014թ. և մինչև 291 մլն. ՀՀ դրամ՝ 2015թ.: 2013թ. հատկացումների համեմատությամբ, դրանք 2014թ. աճել են 5,8 տոկոսով, իսկ 2015թ. 11,9 տոկոսով (5,5 տոկոսի աճ 2014թ. համեմատությամբ):

Առկա խնդիրները

Հանրային պաշտպանի գրասենյակ (ՀՊԳ)

❑ *Պետբյուջեից տրամադրվող սահմանափակ միջոցներ*

Բավարար չեն ՀՊԳ-ի բնականոն գործունեության, պաշտպանների աշխատավարձերի տրամադրման համար: Ընդ որում՝ Հանրային պաշտպանի գրասենյակում աշխատող փաստաբանների թվաքանակը սահմանում է փաստաբանների պալատի խորհուրդը՝ պետական բյուջեի միջոցների հաշվին ֆինանսավորման սահմաններում:

Առկա խնդիրները

Հանրային պաշտպանի գրասենյակ (ՀԳՆ)

❑ *Հանրային պաշտպանների քանակը*

2016 թվականի դրությամբ ՀՀ-ում գործում է **66** հանրային պաշտպան՝ այդ թվում նաև կես դրույքով աշխատողները: Հանրային պաշտպանների հաստիքների քանակը **54** է:

ՀՊԳ-ի 2016 թվականի հաշվետվության համաձայն՝ միայն քրեական գործերի թիվը հասնում է **5264-ի**:

ՀԳՊ-ի 2014-2015թթ. հանրային պաշտպանների քանակը եղել է **52-53** հոգի, քրեական գործերի քանակը՝ համապատասխանաբար՝ **3717 և 4600**:

Առկա խնդիրները

Հանրային պաշտպանի գրասենյակ (ՀԳՆ)

❑ *Հանրային պաշտպանների նշանակում՝ ըստ մասնագիտացման*

Բացակայում է հանրային պաշտպանի գրասենյակում հանրային պաշտպանների նշանակում՝ ըստ մասնագիտացման (օրինակ՝ անչափահասների գործերով, զինվորական հանցագործություններով):

Առկա խնդիրները

Հանրային պաշտպանի գրասենյակ (ՀԳՆ)

❑ *ՀՊԳ-ի կողմից վարվող հաշվետվությունները*

ՀՊԳ-ն 2014 թվականից ներկայացնում է տարեկան հաշվետվություններ վարած քրեական գործերի վերաբերյալ: Օրենքի համաձայն՝ հանրային պաշտպանը իրականացնում է ինչպես քրեական, այնպես էլ քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով ներկայացուցչություն և պաշտպանություն, ինչպես նաև խորհրդատվություն:

Առկա խնդիրները

Հանրային պաշտպանի գրասենյակ (ՀԳՆ)

❑ Առցանց խորհրդատվությունների տրամադրման համակարգ

Ներդնել առցանց խորհրդատվությունների տրամադրման համակարգ, հատկապես այն դեպքերում, երբ քաղաքացուն անհրաժեշտ է ընդհամենը տրամադրել խորհրդատվություն: Բացի այդ, սա կթեթևացնի նաև հանրային պաշտպանների ծանրաբեռնվածությունը, ինչպես նաև կնպաստի քաղաքացիների կողմից ծառայություն ստանալու մատչելիությանը, առավել ևս հաշմանդամություն ունեցող անձանց դեպքում (օրինակ քաղաքացին ստիպված չի լինի Ջերմուկից կամ Վայքից ժամանել Եղեգնաձոր՝ խորհրդատվություն ստանալու նպատակով):

Առկա խնդիրները

Չանրային պաշտպանի գրասենյակ (ՉԳՆ)

❑ *ՀՊԳ գործունեության վերաբերյալ իրազեկվածության խնդիր*

Շատերը չգիտեն, թե ուր կարող են դիմել անհրաժեշտ իրավաբանական օգնություն ստանալու համար այն դեպքում, երբ չունեն բավարար միջոցներ իրավաբանական վճարովի կազմակերպություններ դիմելու: Շատերի մոտ էլ այն թյուր կարծիքն է տարածված, թե հանրային պաշտպանը իրավաբանական օգնություն է ցույց տալիս միայն քրեական գործերով:

2014թ. և 2015թ-ի հաշվետվություններում նշվում է, որ համապատասխանաբար 52 պաշտպանից՝ 48-ը և 53 պաշտպանից՝ 49-ը զբաղվել են քրեական գործերի վարմամբ:

Առաջարկություններ

Այլ կառույցների կողմից իրավաբանական օգնություն ցույց տալու հնարավորությունը

Հնարավորություն ընձեռել իրավունքի տարբեր ճյուղերում մասնագիտացված իրավաբանական ընկերություններին իրականացնել հանրային պաշտպանի գրասենյակի գործառույթներ՝ համագործակցելով ՀՊԳ-ի հետ:

Նման հնարավորությունը ընկերություններին պետք է տրամադրվի մրցութային հիմունքներով, որոշակի չափորոշիչների հիման վրա, ինչպես նաև՝ նրանց աշխատանքի արդյունավետությունը ստուգելու հատուկ մեխանիզմներով:

Առաջարկություններ

Այլ կառույցների կողմից իրավաբանական օգնություն ցույց տալու հնարավորությունը

Օգուտները.

Արդարադատության մատչելիություն բոլորի համար:

ՉՊ-ների թվի աճ:

ՉՊ-ների մասնագիտացում իրավունքի տարբեր ոլորտներում:

Ֆինանսական բեռի թեթևացում, օրինակ՝ կարիք չի լինի գրասենյակներին տրամադրել հատուկ տարածքներ, տեխնիկա և այլ անհրաժեշտ գույք՝ իրենց գործառույթների իրականացման համար, կատարել տարածքի ընթացիկ վերանորոգումներ:

Առաջարկություններ

- ❑ Հանրային պաշտպանի գործունեության մասին իրազեկման բարձրացում:
- ❑ Առցանց խորհրդատվության ծրագրի ներդրում և անվճար խորհրդատվության ծրագրերի իրականացում բոլոր կատեգորիայի անձանց համար:
- ❑ Տարեկան հաշվետվությունների կազմում ինչպես քրեական, այնպես էլ քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով, ինչպես նաև խորհրդատվությունների մասով:
- ❑ Ֆոնդերի հայթայթում այլ աղբյուրներից:



ՇՆՈՐՅԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ